



ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆՔ

ԱՐՇԱԼՈՅՍ

ՔՐԻՍՏՈՆԵՍԻՐՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ

(Շար. տես էջ 241)

Ե.

Այլ Առաքիտք եւ Աշակերտք աւետարանիք Հայոց.

ՉԱՏ այս շորս գլխաւոր Առաքելոց եւ Աշակերտաց՝ որք քարոզած են ի Հայս, և իրենց հօն վախճանելուն համար՝ սեփական համարուին մեր երկրին, կան ուրիշ իրենց ընկերք այլ, որ մեր երկրին սահմանաց մօտեցեր և կոխեր են: Ասոնց գլխաւորն է Առաքելոց գլխոյն Հարազատն՝ Ս. Անդրեաս. որ՝ թէպէս օտար և հեռու երկրի մէջ նահատակուած է՝ խաչուելով, այլ արեւմտեան Ասիոյ Հրահապաղոյն եղած է իր քարոզութեանց ասպարէզն: Դորտեհու վսեմականն՝ որ Առա-

քելոց քարոզութեանց տեղուանք հետաքըննութեամբ նշանակած է, կ'ըսէ Անդրէի համար. « Ընդ ամենայն ծովերն Բիւթանացւոց և Պոնտացւոց և Թրակացւոց և Սիւրիաց... յետոյ գնաց ի Սերաստացւոց քաղաք մեծ, ուր բնակ Արարացւոց և Փասիս գետ, ուր և ներքազոյն Եթովպացւոց բնակնն »: Ուրիշ եկեղեցական պատմիչք այլ վկայեն, որպէս և մերայինք. այլ աւելի եւս Վրացիք, որոց երկիրն աւելի մօտ է անոր քարոզած տեղերուն: Քայց ոչ միայն անոնց այցելութիւն ըրած է, այլ և մեր թագաւորաց տիրած և Հայոց 15 աշխարհաց թուակից՝ Տայոց և Դուզարոց. ուր և մինչեւ հիմայ իբրեւ իրմէ տրուած յիշատակ մի՝ պատուի ի Գեղթի վանս Ս. Աստուածածնին հրաշագործ պատկերն. նոյնպէս և ի կղարջք գաւառ եկած է. ուրիշ գաւառներէ եւս անցնելով՝ ելեր գնացեր է յԵրուսաղէմ, և նորէն դարձեր, կոր գետոյ աղբերավայր կող (հիմայ կեոյէ) գաւառը մտեր, և անտի կոճկասի լեւները կարելով անցեր՝ բարբարոս ժողովրդոց քարոզեր է. և վերագառնալով հուսկ յետոյ՝ Յունաց մէջ՝ յԱթալիա պատկուեր է ի խաչի և խաչը ներբողելով:

Ս. Թեոփորոսի Ամասիացւոց վկայարանութեան մէջ, որ Խորենացւոյ զրէն ելած ըսինք, կ'ըսուի, թէ յԱմասիա այլ քարոզեր

և իր տեղ փոխիմնս անուամբ մէկն եպիս-  
կոպոս դրեր է. ասկից ի Սինոպ անցնելով՝  
այս տեղ այլ, ըստ Գորոթեոսի, եպիսկոպոս  
կարգեր է զՓիրոդոս, մի յՍօթանանիցն,  
սակերտ Պօղոսի Առաքելոյ, որ և ողուննէ  
զառ ի Թղթին առ Հռովմայեցիս (ԺԶ, 15):

Ոչ շատ հեռի այս կողմերէն՝ համարին  
շատ Ս. Հաբք՝ եկած նա և զԱռաքելպետն  
Պետրոս, մինչև ի Սինոպ, և քարգած այն  
ամեն աշխարհաց և ազգաց՝ առ որս զրէ  
իր Ա. կաթողիկէայ Թուղթը, իբրև իրեն  
ծանօթից. « Որ ի սփրեւս Պոնտացոց, Գա-  
« դատացոց և Կապպադովիացոց և Ա-  
« սիացոց և Բիթրանացոց » : Առաքչական  
անուանեալ Կրանեաց վերջն այլ գրուած է.  
« Ընկալաւ ձեռնադրութիւն բաշանայութեան  
« յԱռաքելոցն, Անտիօք և ամենայն Սիւրիա  
« և Կիլիկիոս և Գաղատիա մինչև ցՊոնտոս,  
« ի Սիսովկն վիսկ. զի նա եպ կանոնս եկե-  
« ղեցւոյ », և այլն: Ըստ այսմ ընկալեալ  
հաւանութեան՝ եթէ Գրովն Առաքելոց չէ  
մտած ի բուն ի Մեծ Հայս, այլ մտեր և  
չըջեր է ի Փղբըն, ուր ոչ սակաւ էին այն  
ատեն եւս մերազգիք:

Զուք յոչեր իրեն համապատիւ գլխաւոր  
կոչուած՝ հեթանոսաց համատարած հայրն և  
Առաքեայն Պօղոս, որոյ անգին Թուղթքն  
և Գործքն Առաքելոց՝ վկայեն իր քարոզու-  
թեանց անսահման սազմաններուն: Զմու-  
նանք և զՄիտոյն աշակերտ՝ զՅովհաննէս, որ  
թէ և երկար տարիներ դաղրեր է յԵփեսոս,  
այլ վկայուի մինչև ի Պարթեւոս գնացած և  
քարոզած ըլլալն, և նոյն իսկ իր սիրակաթ  
կաթողիկէայ Ա. Թուղթն՝ աւանդուի յունաց  
հին եկեղեցագրաց՝ թէ ի սկզբան, կոչուէր  
Թաղք Պարթեւաց: Եթէ գնացեր է նա ի  
Պարթեւս, բնական և սովորական անցու-  
ղարձի ճամբայ մի չէր և Հայաստան:

Առաքելոց վիճակաւ ընտրուած Առաքեայն  
Մատարիա այլ, ըստ վկայութեան Հարց  
ոմանց, և ըստ պատմաց Վրաց՝ և իր աշա-  
կերտաց մէկն, Ս. Եռտիթիոս, Ստիոյ շատ  
կողմեր քարոզեր է և յետոյ ի Մելիտինէ  
Փոքր Հայոց նահատակուեր է. անցեր է ընդ  
Կապպադովիա, Կողքես, Ճաննէթ, ի գետա-  
հովիտ Ճորոխի, որ է ըսել մինչև ի սահմանս  
Հայոց: Ս. Հերոնիմոս կ'ըսէ (ի Թանկի Ե-

կեղեցական մատենագրաց), թէ եկեր է նա  
ի միւս Երոպիա, ուր վիժեն Ալլաարոս և  
Հիասիս գեղք՝ (որ համարուին Ճորոխի մէկ  
ծիւղն և Սիւրմէնէի գետն), և ասոնք Սաղ-  
տեաց երկրում կու վստան, որ մասամբ  
կամ բուրոյվին կոչուէր և Հայաստանիք:

Փոքր Հայոց կողմերը լուսաւորողաց մէկն  
այլ համարուի հարիւրապետն այն՝ որ զի-  
նուորական խզախմամբ տիգախոց ըրաւ՝  
մեր այն ինչ հոգին աւանդած Փրկիչը. այն  
է Լոնգինոս կամ Ղոնկիսանոս, և Քրիստո-  
սի կողին հետ իր հոգւոյն աչըը բացաւ, և  
աշակերտաց կարգն անցաւ. Կեսարիոյ մայ-  
րաքաղաքին մէջ նահատակուած ճանչցուի:

Յետ այսքան աւետարանչաց ճշմարտու-  
թեան ի Հայս, յիւնեք և զնա՝ որ կերպով  
մի առաջինն եղաւ, զԹաղէոս և Բարթողի-  
մէոս յորդորմամբ հօն զրկելով. այն է Ա-  
ռաքեայն Թովմաս. առ որ, ինքն Տէրն մեր  
զերազոյն կերպով բացաւ իր կողը, և անոր  
յանդիմանութեամբ պատուիրածը « Մի լի-  
« նիր անհաւատ, այլ հաւատացեալ », ար-  
դեամբք այլ կատարեց, թէ մեզ համար այդ  
առաքելակիցները զրկելով, և թէ ինքնին  
քարոզութեամբք մինչև ի Հեղկատանն, ուր  
և նահատակեցաւ. բայց նախ իրեն վիճակ  
ընկաւ կամ ընտրեց՝ Պարթեւաց երկիրը,  
ըստ Եւսեբիոսի (Գ. Ա). իսկ Որոզինէս՝ կ'ու-  
րոշէ, զԱրեւմտեան Պարթեւոս ըսելով, Տի-  
գրիսի և Եփրատայ միջոց, յորում են և  
Հայք. թէ և ինքն մտած ըլլլայ ի Հայս, բայց  
Հայք ինքն այլ յարգեն վերոյիշելոց հետ,  
և յանուն նորս աւանդեն Բարդողիմէոսի  
չինսած Գողթան Վանանդայ եկեղեցին, որ  
և մեծ ուխտատեղեաց մէկն եղած է, և պա-  
տուաւոր եպիսկոպոսական աթոռ. իր նշխա-  
բաց մեծ մասն մի եւս բերուած է ի Միջա-  
գետաց՝ ի գաւառն Ողջտունեաց, Վանայ  
ծովուն եզերքն:

Վերոյիշեալ Առաքելական կանոնաց վի-  
ճակագրութիւնն՝ որքան և վաւերական չհա-  
մարուի, այլ հաւանականութեամբն և հնու-  
թեամբ պատուի, զՀայս՝ ուրիշ քանի մի աշ-

1. In altera Ethiopia, ubi et irruptio Papsari et Hyssi.

խորհաց հետ Թաղէտի վիճակ գրէ, իսկ Բարդղղիմէտի և Յուդայի և Արդէի՝ առիւելեան և Հարաւային աշխարհները. այսպէս բնիւով (ըստ Չեռագրաց) . « Աւուհ և « որ չուրլ գնովաւ քաղաքը, Մծբին և Ալաւ. « իսկ և սահմանակալք Միջագետաց և Հայք « և ամենայն Հիւսիսի և Հարաւ և որ չուրլ « գնորք, ի Թաղէտէ Առաքելոյ՝ որ է մի « յ'72 Առաքելոցն, ընկալաւ (զձեռնադրու « թիւն) : . . . Պարսք և Մարք և Պարթեւք և « ամենայն Խուժաստան, և ամենայն որ չուրլ « գնովաւ, և Բարբելոն և Գիւղք (Գիւղք)՝ մինչև « ի սահմանն Հնդկաց և մինչև ցՊոզ և Մա. « գոզ, և զայլ աշխարհն որ չուրլ գեղոմամբս « և ամենայն Ասորեստան, ի սուրբ յԱւա. « քելոցս յայս, ի Բարթողովէտէ և Յու. « գայէ և յԱրդէ կերպասագործէ » :

Այսքան յիշատակութիւններ քրիստոնէութիւնը քարոզող Առաքելոց և Աշակերտաց ի Հայս՝ շատ համարելով, անկարելի է (թէ և ամենքն այլ անհավառակ ստոյգ չըլլան) չխորհրդորածել և չարմանալ. նախ, այդ ի սկզբան աստիկ և տպէտ մարդկան՝ այլքան եռանդեամբ և սրբազան յանդրձնութեամբ՝ այնքան շատ և հեռաւոր և կէս անծանօթ աշխարհներ և քաղաքներ մտնել տարածուել, և շուտած լեզունք լսել հասկանալ և հասկըցընել, և այնքան ազգեր (եթէ քիչ եթէ շատ թուով) բոլորովին նոր և աննման և լուրջ անպաճոյճ կրօնքի մի հաստացընել. յորում (ինչպէս սովորաբար կ'ըսուի), յայտնի երեւի մասն Աստուծոյ, և կատարուին Քրիստոսի խոստանքն, թէ՛ « Առջիք զորութիւն « ի բարձանց », այսինքն, Հոգւոյն Սրբոյ շնորհքը, որպէս և առին ի վերնատանն, զգայի հրաձեւ լեզուք. և վերջին պատուիրանն, որ և վերջին խօսք՝ յերկրի վրայ՝ անմիջապէս յերկինս վերանալու վայրկեանն, « Գնացէք այսուհետև, յաշակերտեցէք զա. « մենայն հեթանոսս. մկրտեցէք զնոսա, և « այնն, և հաւատարիկ ես ընդ ձեզ եմ գա. « մենայն առուրս, մինչև ի կատարած « աշխարհի » : Խօսք՝ անձնաւոր ճշմարտութեան, հրաշալի՝ ճշմարտութեամբ կատարուած և շարունակուած և շարունակելի. զի ինքն Քրիստոս կնքեց, « մինչև ի կատարած

« աշխարհի » : Որչափ այլ մեր նպատակն էր սոսկ պատմական եղածը յիշել, անկարելի էր գրչի տակ զարմանաց բռնութիւնը ճնշել. թող ընթերցողը ամփոփեն կամ ընդարձակեն զարմանքը. այն զարմանքը՝ զոր հազար տարի յառաջ քան զմարդեգութիւն Քրիստոսի՝ հնչեցուցեր էր Դաւիթ՝ մարգարեական քնարովք. « Ընդ ամենայն երկիր՝ ել բար. « բառ նոցա, և մինչև ի ծագս աշխարհի « են խօսք նոցա (Առաքելոց) » :

Երկրորդ խորհրդածութիւն մ'այլ նոյնպէս մեզ դժուար է արգելուլ, զի և յատուկ է մեզ ազգայնոցս. և է, այսքան Առաքելոց՝ գրեթէ կէսին՝ և Աշակերտաց այլ ոմանց, գալ մտնել քարոզել ի հայրենիս մեր և ի սահմանակից աշխարհս. կոստանդին Ա կաթողիկոս՝ առ Հեթում թագաւոր գրած թղթին մէջ (1247ին), շեշտելով մի յիշեցընէ, թէ՛ « Հինգ Առաքեալք ի յերկոստանիցն և երեք « յԵթօթանասինցն՝ ի Հայք կան » :

Ասոր համար ոչ պարզապէս պէտք է պատկաւանօք, և այլ խոնարհութեամբ և երախտագիտութեամբ գոհուիլին և փառք մատուցանել Աստուծոյ. որ՝ ինչպէս իր նախախնամութիւնն ի սկզբան մարդկութեան երեւցուց մեր երկրին վրայ, այսպէս և ի վերանորոգմանն այգեւոր մարդուն՝ քրիստոնէութեամբ, յոգեւն սուստապէս աւետարանի լուսոյ ճառագայթները փոխեց հօն, և շուտով, և շատ դարերով յառաջ քան այժմու եւրոպացի լուսաւոր կոչուած երկրի և ազգաց վրայ. — Այս բանն կ'առաջնորդէ երրորդ խորհրդածութեան մի. այս ինքն, եթէ այդքան քարոզութիւնք եղան ի Հայս ի սկզբան քրիստոնէութեանն, ինչո՞ւ Հայաց լուսաւորութեան իրր հեղինակ զՍ. Գրիգոր ճանչնանք, զրեթէ երեք դար յետ Քրիստոսի. ի՞նչ եղաւ ի Հայս՝ այնքան վառ ի վառ առաքելական ճրագներու Լայսն. ինչ եղաւ Հուրն այն՝ զոր եկաւ Քրիստոս արկանել յերկիր, և արկ յերկիրս Հայոց, ի ձեռն իր Առաքելոցն և Աշակերտաց. — Հարկ է ցաւօք խոստովանել, որ՝ թշնամին լուսոյ, մտլորութիւնք, հնաւանդ սովորութիւնք, հալածանք ի կապալա թագաւորաց ազգին և ի Հռովմայեցւոց, (երբեմն թշնամեաց և երբեմն բարեկամաց Հայոց), այնպէս ըրին, Աստուծոյ թող-

տուութեամբ, ինչպէս ուրիշ աշխարհաց մէջ . սակայն ինչպէս այն տեղուանք՝ եթէ խափանեցաւ՝ այլ ոչ մարեցաւ Հուրն և Լոյսն՝ Քրիստոսի, անհնար էր՝ (ստիպուիմք ըսելու) թէ մարեր և ի Հայս . և ահա, ինչպէս պիտի յիշենք քիչ յետոյ, ոչ միայն երբեմն երբեմն երեւեցան նշոյլք լուսոյն և ջերմութիւն հրոյն ի սուրբ նահատակ՝ Մեծ և Փոքր Հայոց, և անոնց ազգային եպիսկոպոսք այլ յայտնուեցան, այլ նոյն ծածկեալ և առկայծեալ բայց արծարծեալ պլպլուկք լուսոյն՝ փայլեցան մինչեւ Պրիզորի օրերն, յառաջ և յետ Լուսաւորութեան նորա, և՛ յարեւմտեան և՛ յարեւելեան Հայս : Այլ քրիստոնէութիւնն է պակսեր (թէ և նուազեր), այլ անոր յայտնութիւնն առ մեզ . պարզարար ըսելով, պատմութիւնն : Եթէ հայ լեզուն իր գիրն այլ ունենար այն ատեն, կամ յունարէնն աւելի ծաւալած ըլլար ի Հայս, և մանաւանդ այնքան հալածանք և աւերանք չըլլային ի Սասանեանց և անոնց համամիտ ուրացող ազգայնոց, շատ յուսայի էր որ պիտի գտուէին գեղեցիկ վկայարանութիւնք՝ գեղեցիկագոյն վկայից Հայոց : Գուցէ ժամանակաւ ինչ ինչ յայտնուի . չի յուսահատիմք . այլ միաթարուհիք հիմայ քիչ շատ մեզի հասած ծանօթութեամբք :

Յետ այսմ ամենայնի, չորրորդ խորհրդածութիւն մի եւս դրդէ զմիտս . թէ, միանգամայն աչքէ անցընելով ինչ որ սեսանք Առաքելոց գալըստեամբ և քարոզութեամբ ի Հայս, կրնանք մեր եկեղեցիին այլ Առաքելական կոչուիլ : Այս բառս կամ իմաստն՝ կրնայ աւելի կամ պակաս ընդարձակ իմացուիլ . որ չպին Հայոց եկեղեցւոյս պատշաճի : — Թողումք վճռել աստուածաբանից, արգարեւ աստուածաբանից : Շատանաճք առ այժմ Առաքելաշնորհ ճաննալով զայն, անգամ մի եւս խոստովանիլ, թէ, « Այլ այսպէս արար « ամենայն ազգաց՝ Տէր » , և ջերմ շնորհակալութեամբ երկըրպագել Քրիստոսի :

Զ .

Հետք քրիստոնէութեան ի Հայս, յ'Բ եւ յ'Գ դարս . — Ոսկեանք եւ Սուքիասանք եւ Ալարատեան վկայք .

Գրեթէ անտարակոյս է՝ որ Աշակերտք Հայոց քարոզիչ Առաքելոց, մինչեւ ի վերջ Ա դարուն Քրիստոսի՝ շարունակէին զնոյն քարոզութիւն կամ զճովութիւն բանաւոր հօտին Քրիստոսի : Որոշակի՝ Խուժիկ Բարեւասայ համար ըսուած է՝ թէ մինչեւ ի սկիզբն Բ դարու ապրեր է . բայց զեռ Ա դարու մէջ և նոյն իսկ Առաքելոց ատեն, մէկ քանի փառաւոր յիշատակք քրիստոնէութեան և նահատակութեանց կան ի Հայս, գոր և տօնին հռչակէ եկեղեցի մեր տարուէ տարի, թէ և զիպուածոց ամեն պարագաներն բացայայտ չըլլան : Ասոնց զիսաւորք են, (աշխարհական բարեկենդանութեան եղանակին ստուած և) վայելուչ քանի մի տուն շարականօք երգաբանեալ Սուրբ վկայքն Ոսկեանք և Սուքիասանք : — Առաջինքն, ըստ պատմութեան Ճառընտրաց և Յայսմաւորաց մեղոց (որոց աղբերքն յունարէն եղած են), ի կայսերաց Հուովմայ զեսպանք եկեր էին ի Հայս, հինգ անձինք . զիսաւորն կոչուէր Խորիստի, որ յունարէն բառին նշանակութեամբ Ոսկի կոչուի հայերէն . բայց կարելի է համանշանակ լատին սնունն ըլլար Աշրեյիտս : Յայսմաւորաց մին՝ Խոսեիկ զրէ անունը և այր Գոնեիկի, Թուի թէ կրէր՝ յոյն անունը այնպէս լսեր է՝ : Ասոնք կու հանդիպին Քաղէոսի աշակերտաց, և անոնց օտարոտի հազուատը տեսնելով՝ կասկածին և սկսին հարցընել ո՞վ և ուստի՞ են . և լսելով ի Քաղէոսէ ստուգապէս՝ ով ըլլայն և Քրիստոսի վարդապետութիւնը, երկրայելով՝ նշան մի կ'ուզեն . և մօտ չլեբան վրայ տեսնելով եղջերուներ, կ'ըսեն՝ որ կանչէ զանոնք կամ մէկ հատը, Քաղէոս

1. Մեր հին հեղինակ վկայաբանութեան Սուքիասանց՝ կ'ըսէ, Տառիսանոս անուամբ մէկու մի գրուածէն ասած, որ Յուստինիանոսի որ մանակն է եղեր, ի կողմանց Յունահայոց, որ

Թուի Գ Հայք : Ուրիշ օրինակ մի փոխանակ Յուստինիանոսի կայսեր զրէ, վարդապետանոս որ աւելի յարար էր ըլլալ վկայերիսանոս, ի կէս Գ դարս :

կանչէ, կու գան. մէկը մորթեն և ուտեն. Թագէտ՝ մորթը սովերաց վրայ ձգելով կ'ողջնցնէ և խաւրէ ընկերացը: Եթէ ոչ այսպիսի հրաշքով մի՛ սակայն Աւազելոյն որ և է քարոզութեամբը կու Հաւատանի ի Քրիստոս և մկրտուին. Խրիւսի ձեռնադրուի քահաւանայ. սպա, փոխանակ զիրենք դեպպէս խաւրոցաց դառնալու, կ'երթան յարջունիս մեր Արտաշէս Բ. ին. և յետ դեպպանութիւնը կատարելու, քրիստոնէութիւն այլ քարոզեն:

Արտաշէս՝ կամ անոնց կայսեր կողմանէ գալուն պատկառելով, կամ իր անուշ բնաւորութեամբը՝ Հանրատորէն լսէ. բայց, Հիմայ գայր քննելու ստեն չունիմ, պատերազմի երթալու վրայ եմ, կ'ըսէ. անոնք այլ Սաթիւնիկ թագուհւոյ քարոզեն: Ասոր քով գտուին իր Ալանաց սգզէն եկած պաշտօնեայք յարջունիս, յորոց 19 անձիք կ'աշակերտին Ոսկեանց. զխաւորին Բաճաղարս կամ Բարաքադր կոչուած է. որ յետ մկրտութեան կուչուի Սաքիաս, յորմէ և ընկերմ Սաքիասանք: Թագւորորդիքն՝ եւսաղուն երիտասարդ՝ և իրենց Հեթանոսական առասպելեաց սիրողք, մանաւանդ երկուքն՝ որ և դիմորշ յօգիւ կուչուին Վլոյն և Վնոյն, (և անչուտ առաջինն է մեր Հին բանաստեղծն Վլոյր կոչուած առ Խորենացւոյ), կու Հարածին զՍկիւանս: Ասոնք երթալով ինչուան Հիմայ ծանօթ և ուխտական տեղ՝ Բազրեւանք գաւառի սահմանները՝ Արածանի (Եփրատայ ճիւղին) աղբիւրականց մօտերը, երկար ստեն (ըստ ոմանց 43 տարի) ճգնաւորական կեանք կ'անցնեն: Իսկ Սուքիասանք նեղուելով արքայորդւոց յորդորակէն՝ կու թողուն արջունիքը և գան Սիկեանց քով, և Հոս մկրտուին, « յակուես « Եփրատայ, ի ծաղկազարդ վայելութեան», ըստ Շարականի մերոյ. որոց անուանքն յուսնարէն յիշուին՝ անչուտ փոփոխելով, ինչպէս իրենց զխաւորին՝ Սուքիասայ՝: Ատեն մի կենալով Սկիւանց մօտ, յետոյ կ'երթան զէպ

յարեմուտը, իրենց զխաւորին անուամբ Սուկաստ լերին ստորոտը, որ Հիմայ յայլազգեաց կոչի Գեօուս տաղ. տեղն՝ ջրոց առատութեան Համար կոչուէր Ջրարադիս կամ Ջրարադիս, զի կ'աւանդուի թէ Ս. Վկայքն երկար տարիներ (44-6) այն կողմեր կենան քարայրներու մէջ՝ միայն խոտ ձարակելով, և կամ ասոր Համար իրեն վայրի այժերու նմանելով՝ Քօջը կ'անուանին, կամ կրտսմերկ մարմինն այժուց մագերու նման ծածկուելուն Համար:

ԱնՀանդարտ Թագւորորդիքն կու գան նորէն նեղեն զՍկիւանս. և յորդորեն իրենց ազգայինները՝ թողու լեռները և դառնալու յարջունիս. և երբ ասոնք « անպարտելի մնացին « ի Հրապուրանաց որդւոյ թագաւորին», ըստ Շարականի, արքայորդիքն այլ սրակոտոր կ'ընեն զՍկիւանս, և շՀամարակելով Սուքիասանց այլ գայլի՛ դառնան իրենց տեղ: Սուկեանց նահատակութիւնն ի 19 սեպտեմբերի նշանակուած է: — Երկու կամ երեք տարի վերջը կ'ըլլայ իրենց աշկերտաց անՀատակութիւնն, այս կերպով՝ իրենց երկրէն ելած ստեն, կ'ըսուի, թէ՛ Ալանաց Թագաւորն կուչուէր Շագարձ, որոյ յալբորդն Գիգիսանս կամ Գադիսանս՝ յիշելով զԲաճաղարս և ընկերները, շատ Հարցուփորձ կ'ընէ, զտոնալու թէ ո՞ր գացեր, ի՞նչ եղեր են. պաշտօնէից մէկն՝ որ Սկիւան կոչուի (միթէ Սկիւանք?), կ'իմացնէ՛ ի Հայաստան երթալին՝ իրենց խնամի Սաթիւկան քով. Գիգիան՝ խաւրէ Բազարահս անուամբ մէկը (որոյ անունն Գրախտ Աստածոյ Թարգմանուի, կ'ըսէ պատմիչն. Ի՞նչ լեզուէ), որ յետ շատ որոնելու գտնէ Սուքիանքը, գտնէ անոնց մէկ քանին՝ նոր աշկերտներով. Հարցընէ տեղեկանայ, որ անոնց գրախաւորն Բաճաղարս ողջ է Հոս, այլ երկար ճգնաւորական վարուքն՝ այլակերպեալ անչուքացեալ: Կ'իմանայ անոնց կրօնքը և կեանքը. շատ յորդորէ որ գտնուն իրենց Հայրենիքը և Հանգիստ սպրին. և երբ անոնք Հաստա

1. Եւ են ըստ ձեռագրաց, երկրորդ զխաւորն՝ Կրտրատիս, Պօշիւքտոս, Ղուկիւանոս, Իզիտոս, Սիւքերոն, այս երկու անուանքն ի մի խառնած՝ ոմանք զրեն Իրօքիքերոն, Մեմաս կամ Մեմիանոս, կամ Մեաս, Փակաս, Սերգիս

կամ Ներգիսոս, Դեմետր կամ Դոմետոս, Աքրիանոս, Յովթիմոս կամ Զօսիմոս, Բիկուոր, Թաւլիտո կամ Թաւլտո կամ Թալտոս, Յորգանէս, Անաստաթէոս, Թէոդիտոս կամ Թէոգիտոս, Յակովբոս, Թէոգիտոս:

տուն մեան քրիստոնէութեան հաւատաց վրայ, բարկանալով՝ կզակնին սղծել տայ տանջանաւ րանով. և յետ այլեւայլ շարչարանոց՝ սրա- կոտոր ընել, և մարմիննին, այրել տայ, կամ, ըստ ոմանց՝ յորս շորս ցեցերու կտակելով ողջ ողջ այրել: Այս 19 վկայից կես կան եղբեր կրկուք այլ՝ պատանիք, ի հարկէ նոր աշակերտք, որք վախճալով փախչին և պահուցանին. և յետ կատարման նահատակացն՝ կ'ելնեն ժողովն անոնց ոսկորները, քարերով ծածկեն, և անուանին այլ գրեն: — Զուտ անընդունելի աւանդութիւն մի՛ կ'ըսէ. թէ հրաշալի տեսչամբ պատուէր կ'ըլլայ Կոստանդիանոս կայսեր, որ կու գայ գտնէ անոնց նշխարները և պատուով թաղէ ի վկայարանի. և այս կ'ըլլայ իրենց նահատակութենէն 230 տարի վերջը: Եթէ Կոստանդիանոսի ի Քրիստոս հաւատալէն 230 տարի մտել երթըցուի՝ Քրիստոսի 80 թուականին սուտ կ'ըլլայ:

Ստուգագոյն է Ս. Կրիզոստ Լուսաւորչի ձեռքով յայտնուիլն՝ թէ ասոնց նշխարաց և թէ Ոսկեանց, և երկուքն տեղն այլ վկայարաններ չիւնուիլն: Սուքիասանց տեղոյն առաջին վանահայր զնէ Լուսաւորչին՝ Արաս անուամբ մէկը, ըստ ոմանց Սեառ, որ զուցէ մականունն ըլլայ: Կ'աւանդէ պատմութիւնն՝ թէ Սուրբքն նահատակութեան տտեն խընդրեցին Աստուծոյ՝ որ այն տեղ առողջարար աղբիւր բղխէ, կամ եղած աղբերքն առողջարար ըլլան, և այնպէս եղան. իրենց օտոգած կամ թրջած գետինն այլ պէս պէս պայծառ գոյններով հողեր յերեւան հանեց, որ սովորական Հանքային կաւոց և ջրոց պէս և այլ աւելի բժշկարար էին, մանաւանդ բորոտներու: Այս աւանդութեանս համեմատ կ'երգէ մեր եկեղեցին անուշիկ շարական մի՛ ի տօնի Սրբոցն, Աւետարանի մէջ յիշուած Պրորատիկէ աւագանին նմանընելով այս Սուկեալ ջրերը. « Աստանոջ նորոգեցաւ « մեզ աւագանն Սեղովմայ, ի բանալ գալստ « սրտից, առ ի մերժել զախտս հոգեոց և « մարմնոց »: — Այս տեղեացս մօտ իբր Գ

գարու սկզբան՝ Վաղարշ թագաւոր Հայոց իր անուամբ քաղաք մի շինեց, որոյ վիճակն հիմայ կոչուի Աշտիշէրտ, և որոյ մօտ չինուեցաւ մեր եկեղեցեաց և վանորէից երեւելեաց մին, բազմաանգայ Ս. Յովնանեան ( իւշ թիլիսէ քոտ այլագեաց), և զուցէ ամենէն մեծագոյնն, Հերակ կայսեր հարուստ և հզօր ձեռաց օգնութեամբ. եպիսկոպոստարանն այլ մին ի զխաւորաց եղաւ:

Ի բոց թողով եղանց և եղջերուաց հնազանդութեամբ մորթուիլն և յառնելն, և մանաւանդ Կոստանդիանոսի գալն Սուքիասանց նշխարները գտնելու, անտարակուսելի է Ոսկեանց և Սուքիասանց իրականութիւնն. զոր ոչ միայն շատ Սրբոց նման մեր Յայամաւորք պատմեն, այլ Յայսմաւորաց աղբիւր եղած վկայարանութիւնք եւս. որոց մին թուի Խորենացոյ գրչէն ելած, որ իր Հայոց պատմութեան մէջ չի յիշեր այս Սուրբար, և թագէտի Սանդըխտոյ նշարակուսր զէպքին հազիւ թէ ակնարկէ, իրմէ առաջ գրողներ եղած ըլլալուն համար, և անշուշտ ինքն է Սուքիասանց և Ոսկեանց վկայարանութիւններն առանձին գրողն, եթէ՛ որպէս հաւանիմ, անոր յիշած աղբիւրն է հռչակաւորն Տատիսանոս. ոչ Յուստինիանոս կայսեր տտեն, (որ շատ յետոյ է քան զինքն, և անոր ատեն այս անուամբ մէկ մի չի ճանչուիր), այլ Ս. Յուստինոս վկային († 167), որոյ աշխատեցաւ Տատիսանոս, ազգաւ ասորի կամ միջագետացի, հեթանոս ծննդեամբ, սպաս քրիստոնեայ և յետոյ աղանդաւոր. մինչ յառաջ ընդգէմ Հելլինաց և Հրէից մոլորութեանց գրէր, և կան մեան այդ գրուածներն, և քանի մի ուրիշ այլ. բայց Գ և Գ դարուց Հարք և Եւսեբիոս՝ վկային, որ շատ կամ անբաւ բան գրած էր. ասոր համաձայնի և Խորենացին՝ իր Ոսկեանց « Բան և ատու « թիւն ճշմարտ՝ Սրբոց Ոսկեանց քահա « նայից »: վերնագրու վկայարանութեան մէջ. թէ « Այր մի ընթերցասէր Տատիսանոս « անուն . . .<sup>1</sup>, բազում ինչ պատմեաց մեզ

1. Այս տեղ մեր հին ձառնորի օրինակողն գրած է. « յաւաւրս Յուստինիանոսի կայսեր », փոխանակ գրելու Յուստինոսի իմաստասիրի

կամ վկայի: Իսկ այս խօսքս կըրնայ առած ըլլալ Խորենացին՝ յեւսեբիոսէ:

« նա ի յունական մատենից, որոյ գրեալն « անթիւ շատաբանութեամբ զբոլոջք՝ և այժմ « ի միջի մերում գտանի. զոր իմ իսկ բազում « անգամ ընթերցեալ գտի », և այլն: Այս նշանաւոր անձին վախճանն յայտնի չէ, բայց համարուի Բ դարու կիսէն ետեւ. որով անտարակոյս կ'ըլլայ Սուքիասանց անկէ առաջ նահատակութիւն, զոր պահանջին և դէպք պատմութեանն, թէ և ոմանք շատ յետաձգեն զայն. ինչպէս Յովզ. կաթողիկոս Պատմինն ինչուան ի Խոսրով Ա թագաւոր մեր. գուցէ Ոսկեանց ճգնութեան 43 տարւոյն վրայ աւելցուցեր են Սուքիասանց 46 տարին եւս, որով Բ դարու կիսէն այլ վերջ կ'ըլլայ իրենց նահատակութիւնն: Հաւանական է յետ մահուան Բ Արտաշիսի եղած ըլլալ նահատակութեան Սուքիասանց, իսկ նա մեռած է ի սկիզբն կայսրութեան Ազորիանոսի (116-28):

Տատիանոսի յիշատակին յարմար համարմ կըցել՝ իրեն շատ մասամբ համանման մէկու մի եւս, թէ ժամանակաւ, թէ ազգաւ (ասորի), թէ անհաստատ և աղանդաւոր կրօնքով, թէ զիտութեամբ և զրուսութեամբ. և է Բարդաժման, աւելի քան զմիւսն ծանօթ Եւսեբիոսի և ուրիշ Հարց: Ասոր համար կ'ըսէ Խորենացի, թէ յետ հերքելու Վաղինդինեանց աղանդը, ինքն այլ նոր աղանդ հնարեց, և զայն ծառայելու համար՝ եկաւ նա և ի Հայս, « Որպէս զի աշակերտել զաք կարասցէ ի « խոսձ հերանոսացս, և ոչ ընկալեալ եղեւ »: Այս նուազաւ բացատրութիւնն մեր այն ժամու ազգայնոց համար՝ համարիմ ըստ յունական արհամարհութեան, որոց՝ (որպէս և Լատինաց առջեւ) ամեն արեւելեան ազգք խոսք էին, այսինքն բարբարոսք: Ետո զժար է հուստալ թէ Բարդաժման՝ կուսպաշտ Հայերը աշակերտել ուզած ըլլայ, ինքն՝ որ ընդունելի չըլլալով ի Հայոց՝ զմաց (անմիջապէս կ'ըսէ Խորեն.): Անի ամբողջին մեհնական գրքերը քննելու, և գրելու քրմաց պատմածը. այլ հաւանելի է՝ թէ քրիստոնէան Հայոց մէջ ուզեց սերմանել իր միայր վարդապետութիւնը. և բարբաղդարք մերժուելով՝ զոնէ անոնց ժամանակին քաղաքական պատմութիւնը գրեց, ուսկից օգտուած է և մեր պատմիչն կամ Եւսեբիոս: Իսկ այն Բ դարու Հայոց քրիստոնէութեան վրայ՝ արդէն յիշեցինք մեր

թագաւորաց այլ հաւածանք հանելը, երբ սղաք երբեմն Պարթեւաց դաշնակից էին, երբեմն Հռովմայեաց, և ըստ ախորժակի յետոնցս՝ հաւածէին զքրիստոնէայս: որպէս յառաջ այլ յիշեցինք, Փերմելիանոսի († 272) աւանդան՝ առ Խորենացոյ, թէ շատ նահատակներ եղած են այն ատեն և ի Հայս:

Ասոնց մեծ և բազմաթիւ խումբ մի՛ բողոքովին անծանօթ մեր պատմըլաց, այլ յօտարաց աւանդեալ և տօնակարգեալ (ի 22 յունիս ամսոյ), ցոյց տան մեր աշխարհին ամենէն աչքի զարնող տեղոյ վրայ, Արարատ լեռին, վասն որոյ և Արարատեան վկայք կոչուին, բիր մի (10,000). նահատակութեան տարին այլ նշանակեն (118): Վերոյիշեալ Ազորիանոս կայսեր յարեւելս պատմաբանց զէմ պատերազմի զնացած ատեն, ի կողմանս Հայոց, խումբ մի 9000 զօրականաց քրիստոնէից՝ քաջալերեալ ի հրելտակէ՝ յաղթեն թշնամեաց, բայց չեն ուզեր դառնալ ի բանակն Հռովմայեացոց. կայսրն շատ յորդորէ և չի յաջողիր զանոնք յետ դարձընել իրենց կրօնքէն. աւելի մեծ գունդ մի զրկէ անոնց վրայ, յորոց հազար հոգի խառնին հաւատացելոց հետ և լրացընեն զթիւ բիրուսն. սղաք չեն ուզեր կուռիլ կայսերականաց հետ, փափագելով նահատակուիլ վասն Քրիստոսի, և այնպէս կ'ըլլան, շատերն խաչուելով ի լեռինս անդ Արարատայ: Նշխարքնին այլեւս այլ կողմեր սփռուի. մասն մի բերուած և պահուի ի Վենետիկ. ուր՝ անուանի պատկերուան մի, Carpaccio, Ժե դարուն վերջները սպորդ († 1522), մեծ և նշանաւոր պատկեր մի նկարած է այս Սրբոց նահատակութեան, որ և ի կարգի ճարտար նկարուց հանդիսանայ՝ յափաղիմիայն գեղարուեստից քաղաքին: Ոչ միայն պատմեն զայս Լատինք, այլ և բանաստեղծք քերտողութեամբ երգած են: Սրբոց առաջնորդն կոչուի Ակաի կամ Ակատ, պատուով՝ արիւրուն, երկրորդն այլ Գարդիեր? (Garcoere)<sup>2</sup>: Այս Ս. Բիրուս նա.

1. Արեւիկանոս յիշած է (ըստ Ֆապրիկի) Պարթեւ Բարդաժման մի եւս, բայց ոչ Իրբեւ զրեւ՝ այլ նկարիչ:  
2. Կ'աւանդեն պատմաւք վարուց հրաշակի

Հատուկութիւնն յառաջ է քան զհռչակաւոր Միկիտիկեան զնդին († 174), որոց շատն Փ. Հայոց Միկիտիկէ քաղքէն ըլլալով՝ այսպէս կոչեցան. կոչուին եւս Շտարածից Լե. ցեան, աղօթքով երկընթէն որոտածայն անձրեւ իջեցընծելուն համար<sup>1</sup>: Այս Բերս Սրբոց պատուի ե ի Սպանիա, ի Գերմանիա ե յիտալիա, ե յատկապէս ի Բիլգա, ի Բիւշենցա, ե յայլ քաղաքս:

Շարայարեղի Ը. Գ. Գ. Մ. ԱԼԻՇԱՆ



ԳՆԱՍԿԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Ս. ԳՊՈՑ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ

ՎՐԱՑ:

(D<sup>r</sup>. V. ERMONI, DE LA MISSION DES LAZARISTES, PARIS).

### Ա Ջ Դ

ԱՄԻ 1897 ի Յրիպոսրի Չօշիցե-րիոյ՝ Համագրայիկն ուսումնական ժողովը մը գումարեցաւ, յորում նշանաւոր քանակ սիրջ գրեցին կամ խօսեցան այլ ե այլ նիւթոց վրայ. ե այսպէս այդ գրութեանց կամ քանակաստորիւնք, ըստ իւրաքանչիւր յեզուաց նրատարակուեցան: Այս քանակաստորեանց մէջ է վերոյիշեալ V. Ermoni ծանօթ հայագիտիկն մի գրութեան ալ՝ Աստուածաշնչիկն հայկական քարգմանութեան վրայ, զոր նկատելով իրեն հետաքննական ե կարեւոր, քարգմանութեանը կը դնենք ինչ ի վայելիս հասարակաց, յաւելնով մեր կողմանէ մեզի կարեւոր կամ օգտակար երեւցած մի քանի ծանօթութեանք (զորս աստեղանիչ

ե հոգիւնկալ Ս. Թերեզիայ կուսի. թէ ի ծամու մահուանն (5 հոկտ. 1882) ուրիշ Սրբոց ոմանց հետ՝ տեսած ըլլայ ե զԱրարատեան վկայս՝ իր հոգին ընդունելու եկած, ինչպէս որ խոստացեր էին իրեն. անշուշտ յատուկ սեր ե յարգութիւն ունեցեր է անոնց:

1. Ըստ ոմանց, առաջ այլ կայր Մեկտիսիկեան անձամբ լեզէն մի, որուն խառնուեցան այս նահատակքս:

պիտի դնենք), բաց ի հեղինակիկն ծանօթու թեանց: — Կանխաւ կը ծանուցանենք էս՝ որ յօրոշման հետ սերտ կապակցորդիւն լռանեցող կետերը յապաւեր ենք:

Ը. ՍՏԾԹ. ՍԱՐԵԱՆ

Ս. Գրոց Հայկական թարգմանութեան վրայ քննադատութիւնն ցարդ՝ յոյժ սակաւ գրագած է\*, ինչպէս որ քաջածանօթ է այդ Աստուածաշնչի արդի մեկնաց: Եւ յիրաւի, մինչդեռ միւս արեւելեան թարգմանութեանց վրայ կարեւոր ե լուրջ աշխատութիւնը եղած են, Հայկականի մասին հազիւ մի քանի աննշան երկեր լոյս տեսած են, ե որք թուի թէ շատ մասամբ ապարդիւն ճեպքեր են: Բայց Հայկական թարգմանութիւնը հիմնովին ուսումնասիրելու մասին եղած անփութութեան պատճառն անշուշտ՝ նոյն լեզուիկն ընդհանուր աղիտութիւնն է: — Գիտելի կէտ մ'ալ կայ, այսինքն՝ վերջին տարիներու մէջ բուն ետանդ մը տեսնուեցաւ արեւելեան լեզուաց ուսման մէջ ընդհանրապէս, այլ զիստարապէս սեմականներուն. սակայն զրծբազղաբար, այս արեւելագիտական շարժման մէջ՝ Մետրոպոլ լեզուիկն վրայ հարեանցի ակնարկ մը միայն ձգուեցաւ: Բուն ճշմարիտ Հայերէնագիտաց թիւն ոչինչ է\*\*:

\* Եւրոպացեաց այս մասին կատարած աշխատութիւնքն՝ մասնականք են ե ոչ շատ ալ գունցութեք: — Իսկ ստեղծ մէջ նախապահելիք են Griesbach. Vet. et Nov. Test. variant. Armen. 1796. — S. Prideaux Tréguelles. Nouveau Test. grec. քաջ նրատարակողիս Հայերէն լեզուիկն աղիտութեան պատճառաւ, խորհրդածութիւնքն ալ մեծ ուրիշ մը չուրին: — Charles Rieu, Բրիտանական Թեոլոգիական ուսումնիւն, որ Ոսկանէ ե Չօշիկով տալաքութիւնները համեմատեց յունական ե ուրիշ թարգմանութեանց հետ: — Th. Hartwell Horne, An introduction to the Critical Study and Knowledge of the Holy Scriptures, 14 edit. 1877. f. IV. 312-315. — Félix Nève, L'Armén. Chrét., Kaulen, Einleit, etc. Cornély, ե այլք: — Հմտ. Մատնադարան Յայկ. Թարգմանութեանց մաթնոց. Վենետիկ. 1889. էջ 244-5. — I. PP. Martin, Introduction à la Critique textuelle du Nouveau Testament. Paris. 1885. էջ 334.

\*\* Հմտ. Ռուսումնասիրութիւնք Հայ լեզուի ե մատնագրութեան յարեմտուս (Թի-Թի գար). Վենետիկ. 1895: